ՆԱԽԱԳԻԾ

Հաստատված է

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհրդի

30 հունվարի 2023թ. թիվ 7 նիստում

Խորհրդի նախագահ՝

Ս. Գևորգյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/պիլոտային-փորձարարական ձևաչափ/

Հաստատված է
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհրդի
_____ _____ 2023թ. թիվ ____ նիստում
Խորհրդի նախագահ՝
_____Մ. Գևորգյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/պիլոտային-փորձարարական ձևաչափ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Համալսարանում գործող դոկտորական դպրոցների գործունեությունը:

1.2. Դոկտորական դպրոցը հետբուհական կրթության համակարգում գիտամանկավարժական ու գիտական բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է, որն իրականացվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի», «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի», «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի», «ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկի» և հարակից այլ իրավանորմատիվային ակտերի հիման վրա:

1.3. Դոկտորական դպրոցը, և որպես գործընթաց, և ինստիտուցիոնալ միավոր, բխում է խորը միջառարկայական հետազոտական և արդյունքների գործնական ներդրման նախաձեռնություններից, որը խրախուսում է ուսումնառողներին առաջանցիկ գաղափարներն ու հետազոտությունները՝ նպաստելով համապատասխան գիտահետազոտական հարացույցի ամբողջականացմանը և կիրառականության ապահովմանը՝ շահակիցների հնարավորինս օբյեկտիվ և ամբողջական ներառմամբ:

1.4. Դոկտորական դպրոցի նպատակն է նախագծել, փորձարկել, իրականացնել և գնահատել գիտատեխնիկական առաջադեմ մեթոդաբանություն և նորարարական գործիքներ՝ փորձաքննության ոլորտում խնդիրների լուծման առավել իրատեսական ներդրման նպատակով:

2. ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Դոկտորական դպրոցը բաղկացած է փորձագետների խմբից, որի կազմը հաստատվում է ՀՊՄՀ ռեկտորի հրամանով, գիտահետազոտական կենտրոնի առաջարկով և հայտատուի դիմումի հիման վրա՝ ըստ համապատասխան ոլորտի և միջոլորտային կապերի: Փորձագետներից առնվազն մեկը պետք է լինի ղեկավարը (այսուհետ՝ վերահսկիչ), այսինքն՝ առաջատար փորձագետ, որի գիտահետազոտական և/կամ կիրառական փորձառության ոլորտը համընկնում է հետազոտության հիմնական, առաջնահերթ կամ առաջատար ոլորտի հետ:

2.2. Փորձագետների խումբը մշակում է հետազոտողի անհատական ուսումնահետազոտական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, անհրաժեշտ մեթոդական փաստաթղթերը և ընթացիկ և եզրափակիչ ատեստավորման կազմակերպման բովանդակային և ընթացակարգային պահանջները:

2.3. Սահմանված ժամկետներում փորձագետների խումբը իրականացնում է ընթացիկ մշտադիտարկում՝ տալով հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ եզրակացություններ, հաշվետվություններ և առաջարկություններ տարբեր գիտակարգերի, առարկաների ներդրման անհրաժեշտության համար, ինչպես նաև իրականացնում է տարեկան ատեստացիան: Մշտադիտարկումը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝ թեմայի,

հետազոտության կառուցվածքի և հետազոտության հիմնական մեթոդաբանության սահմանում և/կամ վերանայում, ուսումնահետազոտական պլանի/ծրագրի հաստատում/փոփոխում և ակադեմիական ազնվություն: Մշտադիտարկման արդյունքները պաշտոնապես արտացոլվում են փորձագիտական խմբի համապատասխան հաշվետվություններում, որոնք ներկայացվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ:

2.4. Անհրաժեշտությունից ելնելով՝ փորձագիտական խմբի առաջարկությամբ և ռեկտորի հրամանով հետազոտության տարբեր փուլերում կարող են ներգրավվել ինչպես այլ հաստատություններից, այնպես էլ օտարերկրյա մասնագետներ և փորձագետներ:

2.5. ՀՊՄՀ դոկտորական դպրոցը գործում է Գիտահետազոտական կենտրոնի կազմում՝ համակարգվելով համապատասխան բաժնի կողմից: Այն ստեղծում է գիտակահետազոտական ազատ որոնումների, շարադրման և տարածման համար նպաստավոր պայմաններ՝ այդ նպատակներին հատկացված միջոցների շրջանակներում:

2.6. Գիտահետազոտական կենտրոնը ռեկտորին է ներկայացնում առաջարկություն մեթոդական խորհրդի ստեղծման, միջառարկայական, գիտահետազոտական ոլորտների վերաբերյալ, որի կազմը հաստատվում է բուհի գիտական խորհրդի կողմից:

2.7. Գիտահետազոտական կենտրոնը վարում է դոկտորական դպրոցի բոլոր շահակիցների (հայտատու, փորձագետներ) անձնական գործերը և կազմակերպում կապը միմյանց միջև, ավարտին տալիս համապատասխան փաստաթուղթ:

2.8. Դոկտորական դպրոցում ուսումնահետազոտական աշխատանքը կազմակերպվում է վճարովի հիմունքներով, որի սահմանաչափը հաստատվում է հետազոտողի ընդունելության ժամանակ: Այն չի կարող ենթարկվել փոփոխության ամբողջ ուսումնառության ընթացքում:

2.9. Դոկտորական դպրոցում ուսումնահետազոտական ժամկետը սահմանվում է առաջընթացի գնահատման անհատական պլանով, ոչ ուշ, քան հինգ տարի:

2.10. Դոկտորական դպրոցի ընդունելության համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (արտերկրում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ համարժեք փաստաթուղթ),

2) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը, ինչպես նաև հետազոտական աշխատանքի պլան,

3) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),

4) քաղվածք աշխատանքային գրքույկից, եթե դիմողն աշխատում է:

3. ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Դոկտորական դպրոցում ուսումնառող հետազոտողը պարտավոր է.

3.3.1.Պահպանել կազմակերպության կանոնադրությունը և ներքին կանոնները, իրավանորմատիվային պահանջները:

3.3.2.Համապատասխան խորհրդի հաստատմանը ներկայացնել հետազոտողի անհատական աշխատանքային պլանը:

3.3.3.Սահմանված ժամկետներում ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ:

3.3.4. Սահմանված կարգով հանձնել որակավորման քննությունները, եթե դրանք նախապես սահմանված են անհատական պլանով:

3.3.5. Տարեկան մեկ անգամ օրենքով սահմանված կարգով հետազոտողը ստանում է երկամսյա արձակուրդ:

3.2. Դոկտորական դպրոցում ուսումնառող հետազոտողն իրավունք ունի.

3.2.1. Գիտական հետազոտություններ կատարելիս՝ կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվելու գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների, իրավունքից, հանրակացարանից:

3.2.2. Փոխհամաձայնեցված կարգով, դիմումի համաձայն դադարեցնել իր ուսումնահետազոտական գործունեությունը:

4. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

4. Հաստատությունից հետազոտողը հեռացվում է.

1) անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով, երբ փորձագիտական խմբի եզրակացությունը լինում է բացասական կատարված աշխատանքի վերաբերյալ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ հաստատության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով կամ հաստատության և հետազոտողի միջև կնքված պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում,

3) հաստատության կողմից սահմանված ժամկետում վարձավճարը չվճարելու դեպքում:

4. Հաստատությունից հետազոտողը ազատվում է.

1) իր դիմումի համաձայն,

2) այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:

5. Հաստատությունից հետազոտողի ազատման մասին հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման

6. Հետազոտողի ուսումնառությունը դադարեցվում է.

1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում կամ ՀՀ Զինապարտության մասին ու հարակից այլ պարտադիր օրենքներով,

2) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,

3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում՝

համապատասխան բժշկական եզրակացության հիմքով:

7.Հաստատությունից հետազոտողի հեռացման հրամանը տրվում է արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին վերջինս նախապես գրավոր տեղեկացվում է:

8. Հետազոտողի հեռացման կամ ազատման դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ պահանջի՝ հաստատության կողմից սահմանված կարգով նրան տրամադրվում են համապատասխան հրամանի պատճենը, ուսումնառության վերաբերյալ տեղեկանք և մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթը: Հաստատության կողմից հաստատված ավարտական փաստաթղթի պատճենը պահվում է անձնական գործում: